

Մփյուռք-Հայաստան ներդրումը կրթական ոլորտում. ռիսկեր և ակնկալիքներ

Ես այսօր խոսելու եմ մի հետաքրքրական նյութի մասին: Երբ մտածում եմք կրթության ոլորտի մեջ ներդրումների մասին, մանավանդ այս տեսակի համաժողովի ժամանակ, որտեղ քննարկում եմք Հայաստան-Մփյուռք հարաբերությունները, անշուշտ, կմտածենք Հայաստանում Մփյուռքի ներդրման մասին, մասնավորապես՝ օգտակար լինելով մեր հայրենիքի տնտեսությունը: Այս տեսակի ներդրումները շատ ծանոթ են մեզ և անշուշտ, ամենալավ ներդրումները անպայմանորեն միայն դրամական կամ ֆինանսական չեն, դրանք նաև գործնական հմտություններն են, ուր նոր օրինակներ, նոր մտքեր, նոր մտածելակերպ՝ մանկավարժական նոր մոտեցումներով և այլն, ներդրված են մեր երկրի մեջ, իհարկե, համապատասխանելով ներդրված գումարներին: Թումոն բացահայտորեն նպաստյալն է այս մակարդակի ներդրման, որը կոչեմ՝ **մակարդակ մեկ**:

Միարժամանակ, ֆինանսապես և գործնական հմտությունների առումով Մփյուռքն ինքը պետք է օգտվի իր այս ներդրումով Հայաստանում: Անշուշտ, կարելի է և կցանկանայի այս ներդրման մակարդակը կոչել՝ **երկու**: Մփյուռքը Հայաստանում ներդրում է կատարում և վերադառնում է: Սակայն Հայաստանից դեպի սփյուռք ներդրման հստակ մի ուղղություն կա, որը կոչվում է **մակարդակ երկու**: Ներդրում է նաև Մփյուռքի երիտասարդներին իրենց Հայրենիքի հետ կապելը՝ ստեղծելով տեղական մարդուժ, ստեղծելով մշակութային արժեքներ՝ գրկանություն, դասագրքեր, ֆիլմեր, որոնք պետք է սպառվեն սփյուռքի մեջ: Այս բոլորն օրինակներ են և, իհարկե, դժվար չէ մտածել այս ամբողջի մասին: Մտածենք, թե ինչպե՞ս Հայաստանում կրթության մեջ ներդրումը կարող է հետաքրքրական մի բաժին վերադարձնել սփյուռքին: Պատկերացրեք օրինակ, որ Թումոն Հայաստանում ստեղծում է անիմացիաներ, որոնք կարելի է օգտագործել սփյուռքի հայկական դպրոցների մեջ:

Ինչ որ ուզում եմ **երրորդ մակարդակ** կոչել, այն է, որ այս պարագայում մարդը կսկսի նոր աշխարհ մտնել, որտեղ նոր հորիզոններ բացելու կարևորություններ կբացվի մեր առջև: Մի բանի մասին շատ եմ մտածում և ինձ հետաքրքրում է, ուրեմն այս երրորդ մակարդակը կվերածվի Հայաստանի ներդրման մասին, Հայաստանում ներդրում կկատարեն Մփյուռքի կրթության մեջ: Ինչու՞ Հայաստանը, արդյո՞ք նույնիսկ պետք է մտածել ներդնելու մասին: Անշուշտ, սփյուռքին պետք է օգուտ բերել, որի անհրաժեշտությունը կա, իսկ արդյո՞ք կարելի է այդ անել որևէ առումով, երբ մենք նկատի կունենանք արևմուտքի Մփյուռքը՝ Եվրոպան, Ամերիկան, ինչպես նաև Դուբայը, Մոսկվան: Ըստ Թումոյի օրինակի կարելի է ունենալ մի հետաքրքիր ապրանք, մեթոդներ ունեցող, որն Արևմուտքում պահանջված է: Ուրեմն Սան Ֆրանցիսկոյում Թումո ունենալը, Փարիզում, Գլենդելում կամ Բրյուսելում, Բեյրութում կամ Աբու Դաբիում կարող են ունենալ երկու օգտակարություն, առաջին՝ մեր հայկական կրթական նյութերի մշակումը և վերապատրաստումը արդիական և տեխնոլոգիական մոտեցումներով,

օրինակ՝ հայկական տարատեսակների մշակումը, թվային երգերի մշակումը, անիմացիաները, հայրեն բովանդակություններով և այլն: Ուրեմն Թումոն արևմտյան սփյուռքյան համայնքներում պետք է օգնի պահպանելու մեր մշակույթը, վառ պահել այդ մշակույթը և մեր երիտասարդ սերնդին տա ինչ որ կհամապատասխանի իր այսօրվա կյանքին: Այս կենտրոնում հավաքվում են հարյուրավոր հայ երիտասարդներ, ուր բնականաբար կգրադվեն թվայնացումով, այն տեխնոլոգիաներով, դիզայնով, սոցիալական ցանցերով և այլն:

Մենք խոսեցինք երեք մակարդակների մասին.

- Սփյուռքը ներդրում է կատարում Հայաստանի կրթության մեջ,
- Սփյուռքը կօգտվի այդ ներդրումից,
- Հայաստանը ներդրում կկատարի սփյուռքի կրթության մեջ՝ մշակույթի պահպանման համար:

Հիմա արդյո՞ք չորրորդ մակարդակը կա: Հայաստանը, երբ ներդրում կատարի սփյուռքի կրթության մեջ նաև օգտակարություն պիտի քաղի այդ ներդրումից: Բնականաբար այս ամենի մասին պետք է մտածել ու տրամաբանական է: Վերադառնալով օրինակին. Գլենդելի մեջ Թումոյի օրինակը վերցնելով ուղակիորեն մեզ պետք է կապի Հայաստանին, Հայաստանին պետք է կապի արդիական և զարգացած կենտրոնները, մեղիա SS և ուրիշ բազմաթիվ բնագավառների մասնագետներին:

Հուսամ կարողացա բացատրել և կարողացա պատկերացնել տալ, որ ներդրումները միայն Սփյուռք-Հայաստան չեն, և միայն միակողմանի չեն, և հաճախ երկկողմանի են և այդ ներդրումները շատ արդյունքներ կարող են տալ բոլորիս:

Շնորհակալություն:

Մարի Լու Փափազյան

«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի գործադիր տնօրեն (ԱՄՆ):